ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 10 » օգոստոսի 2018թ.
Ժամը՝ **11 ՍՍ**

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ս. Բալոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է. Ոսկանյան, Ռ. Շահազիզյան Գ. Մանուչարյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Միրզոյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ.Վարդանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
1.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
1.3. Հանձնաժողովի նիստի կասեցման վերաբերյալ տեղեկություններ,
1.4. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ տեղեկություններ
1.5. Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հուլիսի 23-ին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե(այսուհետ՝ Կոմիտե), առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտե սույն թվականի հուլիսի 26-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հուլիսի 23-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հուլիսի 26-ին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Հանձնաժողովի նիստի կասեցման վերաբերյալ տեղեկություններ

Հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի դրույթները, հանձնաժողովի՝ օգոստոսի 27-ին կայացած նիստը կասեցվել է մինչև սույն թվականի օգոստոսի 3-ը ժամը 16:00-ն:

Հանձնաժողովի՝ օգոստոսի 3-ին կայացած նիստում, փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես Կոմիտեից տրամադրված տեղեկատվության համաձայն մասնակիցը չեր բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի համար հրավերուվ սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոնշյալը, և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի դրույթները, հանձնաժողովի նիստը կասեցվել է և հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

5. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ տեղեկություններ

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի օգոստոսի 6-ին հանձնաժողովին է ներկայացրել կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը:

6. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

6.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին,
6.2. «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի դրույթները, ինչպես նաև էլեկտրոնային թվային ստորագրության պաշտպանվածության վերաբերյալ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից տրված պարզաբանումը,
6.3. Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով, անգործության ժամկետի ավարտից հետո, «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված

հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

7. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	_____	Ս. Բալոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Է. Ոսկանյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Ռ. Շահազիզյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Գ. Մանուչարյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Գ. Սիրզոյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	_____	Հ.Վարդանյան